

Հայկուհի Մուրադյան

պ. գ. թ.

Երևանի պետական համալսարան

haykuhi.muradyan@gmail.com

«ԹԱՎԻՇԸ» ՀԱՆՈՒՆ, ԹԵ՞ ԸՆԴԴԵՄ ՄՇԱԿՈՒՅԹԻ. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑՈՆԱԼ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ ՀԵՏՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Բանալի բառեր. մշակութային քաղաքականություն, «Թավշա» հեղափոխություն, ինստիտուցիոնալ և բովանդակային փոխակերպումներ, մշակութային ծրագրեր, մշակութային կրթություն, համայնքային մշակույթի զարգացում

Մուտք

Հոդվածում քննարկվում են հետհեղափոխական շրջանում (2018–2020 թթ.) ՀՀ մշակութային քաղաքականության բովանդակային և ինստիտուցիոնալ փոխակերպումները և ձևափոխությունները: Ներկայացվում է քաղաքական առաջնորդի սցիալ-մշակութային կերպարի արտացոլումը մշակույթի կառավարման վրա: Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են մշակույթի ոլորտին վերաբերվող պետական ծրագրերը, նոր նախաձեռնությունները, հետազոտության խնդիրներն արտացոլող ԶԼՄ և էլեկտրոնային հրատարակումները, ինչպես նաև խորացված հարցազրույցներ են անցկացվել ոլորտի պատասխանատուների հետ:

2018 թ. «Թավշա հեղափոխություն»-ից հետո Հայաստանում ծավալվող իրադարձությունների ամբողջական ուսումնասիրությունը միայն մեկ գիտակարգի միջոցով, բավականին բարդ է: Զարգացումները և փոփոխությունները համակարգային են, վերաբերում են քաղաքական ու հանրային բոլոր ոլորտներին, այդ թվում նաև մշակույթին:

«Պե՞տք է մեզ մշակույթի նախարարություն»

Թավշա հեղափոխությունից հետո (2018 թ.) քաղաքական նոր էլիտայի ձևավորումն էապես ազդեց մշակույթի նոր ընկալումների ձևավորման և դրա արդյունքում մշակութային քաղաքականության¹ նոր համակարգի ձևավորման վրա: Մշակութային քաղաքականության համակարգի մեջ փոփոխությունները սկսվեցին նախևառաջ ինստիտուցիոնալ մակարդակում: Համաձայն 2019 թվականի

¹ Սույն հոդվածում մշակութային քաղաքականությունը դիտարկվում է որպես պետական քաղաքականություն՝ ուղղված մշակույթի պահպանմանն ու զարգացմանը (UNESCO 1969):

մայիսի 8-ին Հայաստանի ազգային ժողովի կողմից ընդունված Հայաստանի կառավարության կառուցվածքի փոփոխությունների մասին ՀՀ օրենքի՝ մշակույթի նախարարությունը, սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունն ու կրթության և գիտության նախարարությունը վերակազմակերպվեցին Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության²: Նման օպտիմալացումը տարբեր հանրային արձագանքների արժանացավ: Արձագանքողների մի մասը դեմ էր նախարարությունների միավորմանը, քանի որ այն առանձնապես չէր լուծում ինչպես մշակույթի, այնպես էլ կրթության և գիտության ոլորտում կուտակված խնդիրները, չէր հիմնավորվում ինստիտուցիոնալ փոփոխությունների անհրաժեշտությունը և կարևորությունը³: 2019 թվականի հունիսի 1-ին ընդունվեց ՀՀ ԿԳՄՄՆ նոր կանոնադրությունը, որով սահմանվեցին նախարարության նպատակներն ու խնդիրները, գործառույթները, կառավարումը և ղեկավարումը, ֆինանսավորման ձևերը, կառուցվածքը և ստորաբաժանումները, թվարկվում են նախարարությանը ենթակա մարմինները, ինստիտուտները, կառույցները⁴:

**Մշակույթի սոր ընկալումը.
մշակույթ-կրթություն և փոխհարաբերությունները**

Մշակույթի հանրային ընկալման ձևավորման համար կարևոր նշանակություն ունի քաղաքական առաջնորդի անձնական պատկերացումները և ընկալումները, սեփական համոզմունքները մշակույթի վերաբերյալ: Մեջբերենք մի հատված ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանի ԿԳՄՄՆ այցելության և խորհրդակցության ժամանակ հնչեցված ելույթից. «...Մշակույթի ոլորտի մասին հետևյալը կուզենայի ասել: Նախկինում առիթ ունեցել եմ ասելու՝ համարում եմ, որ մշակույթը կամայական երկու քաղաքացու հարաբերությունների որակը բարձրացնելու միջոց է և հարթակ: Մեր քաղաքական դիրքորոշումն է, որ մշակույթը կրթության և հանրային կրթության անբաժանելի մաս է, և մշակույթի նշանակությունը հանրության ինտելեկտուալ մակարդակը շարունակաբար բարձրացնելն է»⁵: Նույն քննարկման ժամանակ վարչապետը նշել է, որ «Հետպատերազմական մշակույթային քաղաքականությունը պետք է միտված լինի հանրության հոգեբանության վերականգնմա-

2 Տես՝ Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին օրենքի փոփոխություններ – ա: Նոր կազմավորված նախարարությունը, որը ներառում է հասարակական չորս ոլորտների կառավարումը, զարգացումը և աշխատանքների կազմակերպումը, իր գործունեության նպատակը սահմանեց հետևյալ կերպ. «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը» (տես՝ ՀՀ կառավարության կառուցվածք)

3 Տես՝ Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին օրենքի փոփոխություններ – բ:

4 Տես՝ ՀՀ վարչապետի որոշումը: Կարելի է փաստել, որ նոր կանոնադրությունը նախկին երեք՝ Մշակույթի, Սպորտի և երիտասարդության հարցերի և Կրթության և գիտության նախարարությունների կանոնադրությունների ընդհանրացված տարբերակն է:

5 Տես՝ Բարեփոխումների օրակարգ

նը և ճգնաժամի հետևանքների հաղթահարմանը»⁶: Այսպիսով, տեսնում ենք, որ մշակույթը մի կողմից ընկալվում է որպես հասարակությունը բարեկրթող, զարգացնող կարևոր գործոն, մյուս կողմից նաև լիցքաթափող, ժամանցային ոլորտ⁷:

Մշակույթի նոր ընկալումը ձևավորում է մշակութային նոր ծրագրեր...

Մշակութային քաղաքականության նոր համակարգում, բացի ինստիտուցիոնալ փոփոխություններից, նկատելի են նաև գաղափարական, ծրագրային և ռազմավարական փոփոխություններ: Եթե մինչև հեղափոխությունը մշակույթը մեծամասամբ պետական լիազոր մարմինների կողմից ձևակերպվում էր իր նեղ ընկալմամբ՝ մշակույթը որպես արվեստ և հրամցվում էր հասարակությանը՝ ներառելով կերպարվեստի, երգի, պարի, ժողովրդական արվեստների ճյուղերը, ապա այսօր մշակույթը սերտորեն կապվում է կրթության հետ և քաղաքական դաշտում սահմանվում է որպես կրթության մի տեսակ՝ մշակութային կրթություն, որը պետք է տարբեր ծրագրերի և նախագծերի միջոցով հասանելի լինի հասարակության լայն զանգվածներին: Մշակութային քաղաքականության նոր հայեցակարգ դեռևս չի մշակվել, սակայն 2018 թվականից սկսած ձեռնարկված կրթամշակութային ծրագրերը ցույց են տալիս մշակույթ-կրթություն նոր փոխհարաբերությունների և փոխգործունեության բնույթը⁸:

Ներդրված մշակութային ծրագրերի նպատակն է մշակութային կրթությունը դարձնել հանրային երևույթ, սերտացնել հասարակություն-մշակույթ կապը և դա սկսել դպրոցից և նախակրթարան: Այս համատեքստում մշակույթն ընկալվում է որպես հասարակությունը զարգացնող, կրթող, դաստիարակող մի երևույթ, որը պետք է նախևառաջ հասանելի և մատչելի լինի բոլորի համար⁹:

6 Տես՝ Բարեփոխումների օրակարգ

7 Ազգային ժողովում իր ելույթներից մեկում վարչապետը նշում է. «Հանրության կրթական մակարդակը շարունակաբար բարձրացնելու գործում առանցքային նշանակություն ունի նաև մշակույթը և կառավարության քաղաքականությունն ուղղված է լինելու քաղաքացու և մշակույթի մշտական հաղորդակցությունն ապահովելուն: Մեր նպատակն այն է, որ Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացի ամսվա ընթացքում մի քանի անգամ հաղորդակցություն ունենա մշակույթի և մշակութային կյանքի հետ. նկատի ունեն՝ թանգարան այցելի, թատրոն, ցուցահանդես, համերգասրահ: Կառավարությունը պետք է կոնկրետ միջոցներ ձեռնարկի վաղ հասակից երեխաներին մշակութային կյանքին առնչվելու սովորությամբ դաստիարակելու համար: Այս ամենը, սակայն, ոչ թե ինքնին նպատակ է, այլ միջոց՝ հասնելու հանրային հարաբերությունների բոլորովին նոր, բոլորովին ուրիշ մակարդակի: Եվ այս քաղաքականության գործնական նպատակը պիտի լինի հանրության երկու կամայական ներկայացուցչի հարաբերությունների մակարդակը փոխելը, հարաբերությունների մակարդակն ու որակը բարձրացնելը» (տես՝ Վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթը):

8 ՀՀ ԿԳՄՄՆ նախաձեռնությամբ Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնը 2019 թվականից իրականացնում է «Դասարան+Դասական» թատերական կրթական ծրագիրը (տես՝ Դասարան-դասական), «Քո արվեստը դպրոցում» (տես՝ Քո արվեստը դպրոցում), «Դպրոցական արձնեմենտային համակարգի ներդրման» ծրագիրը (տես՝ Դպրոցական արձնեմենտային համակարգ), ԿԳՄՄՆ և Հայաստանի պետական սինֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Սերգեյ Մմբալայանի համատեղ ջանքերով 2018 թվականին մեկնարկել է «Դաս Ա» ծրագիրը (տես՝ Դաս-ա):

9 Նման ընկալումը և հետևաբար դրանից բխող քաղաքականությունը շատ նման է 1960-

Մշակույթ-կրթություն նոր փոխհարաբերություններից բացի սկսվում են մշակվել նոր ծրագրեր, որոնք ուղղված են համայնքային մշակութային գիտակցության ձևավորմանը, ինչը ենթադրում է ձևավորել մարդկանց մոտ նոր գիտակցություն առ այն, որ մշակույթը, բացի պետական հոգաձույթունից, նախևառաջ համայնքի պահպանության և հոգաձույթան կարիքն ունի¹⁰:

Համայնքային զարգացման մշակութային ծրագրերը թեև խնդիր են դնում նպաստել մշակութային մոբիլիզացմանը և ինքնադրսևորմանը, սակայն մեր դիտարկումների համաձայն նրանց հիմնական խնդիրն այն է, որ չեն բխում մշակութային քաղաքականության հայեցակարգից (cultural polity) և դրան համապատասխանող ռազմավարությունից (cultural policy) և ներկայացնում են մշակութային քաղաքականության եռամաս համակարգի միայն երրորդ աստիճանը՝ մշակութային ծրագրերը (cultural politics): Հետևաբար դրանց երկարաժամկետ արդյունավետությունը և հասարակության մեջ որոշակի կադապարների և պատկերացումների փոխելը, նոր ընկալումների ձևավորումն ու արմատավորումը դառնում է վիճահարույց: Այս ծրագրերն աշխատում են կարճաժամկետ արդյունավետությամբ, կոնկրետ որևէ համայնքում կամ շրջանում որևէ խնդիր լուծելու համար, բայց ընդհանուր հայեցակարգային փոփոխության չեն հանգեցնում:

Եզրակացություններ

- Մշակութային քաղաքականության մշակողների և իրականացնողների մտահոգությունն է, թե արդյոք Մշակույթի նախարարությունը՝ որպես առանձին պետական մարմին, պետք է մեզ, թե ոչ: Կարծիքները և դիրքորոշումները այս հարցի շուրջ երկատվում են, յուրաքանչյուր կողմ փորձում է իր հիմնավորումներով և փաստարկներով ապացուցել իր մոտեցումը: Ինստիտուցիոնալ որևէ փոփոխություն պետք է բխի գաղափարական հիմնավորումներից, որն այս պարագայում կարծեք թե բացակայում է: Հետևաբար՝ այս հարցը կմնա որպես մշակութային քաղաքականության դիլեմա այնքան ժամանակ, քանի դեռ չկա մշակութային քաղաքականության հստակ մշակված հայեցակարգ:

ական թվականներին Ֆրանսիայի մշակութային քաղաքականությանը, երբ Շարլ դը Գոլը և Անդրե Մարտն գտնում էին, որ հասարակության զարգացնող և կրթող միջոցը մշակույթն է՝ թանգարանները, թատրոնները, գրադարանները, և այս կառույցները պետք է ամուր պետական հիմքեր ունենան, ծառայեն հասարակությանը և ձևավորեն քաղաքակիրթ հանրույթ: Այսօրվա մշակութային քաղաքականության նպատակը կարծեք թե մասամբ համընկնում է 20-րդ դարի երկրորդ կեսի Ֆրանսիայի մշակութային քաղաքականության մոդելին, որտեղ հիմնական կարգախոսն էր՝ «Մշակույթը բոլորի համար» (LOOSLEY 2001):

¹⁰ Համայնքի մշակութային գիտակցության ձևավորմանն է ուղղված «Օկտավա». «Մշակույթը սկսվում է համայնքից» ծրագիրը: «Օկտավա» նախագիծը ստեղծվել է մշակույթի ապակենտրոնացման, մայրաքաղաքի ու մարզերի միջև մասնագիտական անջրպետի հաղթահարման համար (տես՝ Օկտավա): Կարևոր է ընդգծել նաև «Մարզային մշակույթի տների հզորացում և համայնքներում դրանց դերի վերաիմաստավորում» ծրագրի մասին, որը նախաձեռնվել է «Իմ քայլը» հիմնադրամի կողմից և նպատակ ունի զարգացնել մարզային մշակութային կյանքը, տեխնիկական աջակցություն ցուցաբերել շրջաններում մշակութային կյանքի ակտիվացման համար (տես՝ Մարզային մշակույթի տների հզորացում):

- Հաջորդ խնդիրը մշակութային քաղաքականության մեջ նոր կրթամշակութային ծրագրերի, նախաձեռնությունների և միջոցառումների արդյունավետության չափումն է: Ինչպես պետք է չափվեն, գնահատվեն և փոխադարձ կապի մեջ լինեն ԿԳՄՄՆ ցանկացած իրականացվող ծրագիր: Սա այն հիմնախնդիրներից է, որի լուծման համար կրկին անհրաժեշտ է ունենալ հետազոտությունների վրա հիմնված երկարաժամկետ և կարճաժամկետ նպատակների և խնդիրների համակարգ, դրանց լուծումներին ուղղված կոնկրետ ծրագրեր:
- Հետհեղափոխական մշակութային քաղաքականությունը երեք տարիների ընթացքում առերեսվեց լրջագույն մարտահրավերների հետ (համավարակ, պատերազմ, հետպատերազմյան ճգնաժամ, մշակութային ժառանգության արցախյան հատվածի մեծ մասի կորուստ, մշակութային վանդալիզմի տարբեր դրսևորումներ), որոնց հաղթահարման համար պետական մակարդակում դեռևս որոշակի ուղիներ մշակված չեն: Համավարակի պայմաններով ստեղծված բարդությունները և խնդիրները (մշակութային օջախների գործունեության սահմանափակումներ, մշակութային կառույցների գործունեության դադարեցում, խիստ կանոններ, որոնք սահմանափակում են մշակութային միջոցառումների կազմակերպումը, մասսայական միջոցառումների ժամանակավոր դադարեցում և այլն) ինչ-որ առումով փորձ արվեց հաղթահարել «տնից թանգարան, գրադարան» ծրագրի ներդրմամբ (տես՝ Տնից թանգարան):
- Արտաքին մշակութային քաղաքականության մեջ ևս նկատվում են մի շարք փոփոխություններ, որոնք պայմանավորված են ոչ միայն «Թավշյա» հեղափոխությամբ և համավարակի ստեղծած պայմաններով, այլև 2020 թվականին Ադրբեյջանի սանձազերծած պատերազմով: Հետպատերազմյան ՀՀ մշակութային քաղաքականության հիմնական խնդիրը դարձավ միջազգային մշակութային կառույցների ուշադրությունը հրավիրել արցախյան մշակութային ժառանգության պահպանությանը¹¹:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

UNESCO 1969 – Cultural policy: a preliminary study, Paris: UNESCO, 1969.
 LOOSLEY 2001 – David L., Cultural policy in France since 1959: arm’s length, or ‘up close and personal?’ // http://fgimello.free.fr/documents/florida/cultural_policy_in_france.pdf

¹¹ ՀՀ ԱԳ և ԿԳՄՄ նախարարությունները պարբերաբար դիմել են միջազգային կառույցների՝ ի դեմս ՅՈՒՆԵՍԿՕ-ի (UNESCO), Թանգարանների միջազգային խորհրդի ԻԿՈՄ-ի (ICOM), Համաշխարհային հուշարձանների հիմնադրամի (WMF), Հուշարձանների և տեսարժան վայրերի պահպանման միջազգային խորհրդի ICOMOS, «Կապույտ վահան» միջազգային կազմակերպության BSI, Մշակութային արժեքների պահպանման և վերականգնման հարցերով միջազգային հետազոտական կենտրոնի ICCROM, Հնագետների եվրոպական ասոցիացիայի EAA, Հակամարտության գոտիներում ժառանգության պաշտպանության հարցերով միջազգային ալյանսի ALIPH, որպեսզի վերոնշյալ կառույցները արձագանքեն, միջամտեն կանխեն արցախյան մշակութային ժառանգության ոչնչացումը, անարգումը և աղավաղումը:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ-ա – ՀՀ օրենքը «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին // <https://www.arlis.am/documentview.aspx?docid=130615>, մուտք՝ 5.10.2021:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ-բ – «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծեր// <https://www.e-draft.am/projects/1503/digest>, մուտք՝ 8.10.2021:

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ – ՀՀ վարչապետի որոշումը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրությունը հաստատելու, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 701-Լ, n 703-Լ և N 705-Լ որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին // <https://www.arlis.am/documentview.aspx?docid=142270>, մուտք՝ 10.10.2021:

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ – Հայաստանի Հանրապետության կառավարություն, կառուցվածք// <https://www.gov.am/am/structure/275/>, մուտք՝ 15.10.2021:

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՕՐԱԿԱՐԳ – Բարեփոխումների օրակարգը պետք է բխի մեր իրականությունից. վարչապետը ծանոթացել է ԿԳՄՍ նախարարության ծրագրերի ընթացքին // <https://escs.am/am/news/8196>, մուտք՝ 15.10.2021:

ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓՈՇԻՆՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ – Վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթն ազգային ժողովում կառավարության ծրագիրը ներկայացնելիս// <https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2018/06/07/nikol-pashinyan-speech-national-assembly/>, մուտք՝ 15.10.2021:

ԴԱՍԱՐԱՆ-ԴԱՍԱԿԱՆ – «Դասարան+դասական» թատերական կրթական ծրագիր // <https://escs.am/am/news/5819>, մուտք՝ 2 5.10.2021:

ՔՈ ԱՐՎԵՍՏԸ ԴՊՐՈՑՈՒՄ – «Քո արվեստը դպրոցում» կրթական ծրագիր // <https://escs.am/am/news/5820>, մուտք՝ 5.10.2021:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՐՈՆԵՄԵՆՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ – Դպրոցական արձեռնաստային համակարգի ներդրման ծրագիր // <https://escs.am/am/news/5821>, մուտք՝ 25.10.2021:

ԴԱՍ-Ա – «դասԱ» կրթամշակութային ծրագիր // <https://escs.am/am/news/5822>, մուտք՝ 25.10.2021:

ՕԿՏԱՎԱ – «Օկտավա». «Մշակույթը սկսվում է համայնքից» կրթամշակութային ծրագիր // <https://escs.am/am/news/5824>, մուտք՝ 25.10.2021:

ՄԱՐԶԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ – Մարզային մշակույթի տների հզորացում և համայնքներում դրանց դերի վերաիմաստավորում // <https://mystep.foundation/hy/our-work/188/>, մուտք՝ 5.10.2021:

ՏՆԻՑ ԹԱՆԳԱՐԱՆ – «Տնից թանգարան և գրադարան» // <https://escs.am/am/static/museumfromhome?s=culture>, մուտք՝ 28.10.2021:

Haykuhi Muradyan

Ph.D.

Yerevan State University

E-mail: haykuhi.muradyan@gmail.com:

**“VELVET” FOR OR AGAINST CULTURE?
INSTITUTIONAL TRANSFORMATION OF CULTURAL POLICY
IN POST-REVOLUTIONARY ARMENIA**

Keywords. Cultural policy, “Velvet” revolution, institutional-content transformations, cultural programs, cultural education, development of community culture.

The article discusses the institutional transformations of the RA cultural policy in the post-revolutionary period (2018–2020). The main task of the research is to present the changes that the cultural management system has undergone after the revolution, what are the main aspects that influenced the emergence of a new model of cultural policy or at least its outline. The article presents the reflection of the socio-cultural image of the political leader on the management of culture. Within the framework of the research, the state programs related to the cultural sphere, new initiatives, electronic media publications reflecting the research problems were studied, as well as in-depth interviews were conducted with the responsible persons of the sphere.

Айкуи Мурадян

к. и. н.

Ереванский государственный университет

haykuhi.muradyan@gmail.com:

**“БАРХАТ” ЗА КУЛЬТУРУ ИЛИ ПРОТИВ?
ИНСТИТУЦИОНАЛЬНЫЕ ТРАНСФОРМАЦИИ КУЛЬТУРНОЙ ПОЛИТИКИ
В ПОСТРЕВОЛЮЦИОННОЙ АРМЕНИИ**

Ключевые слова. Культурная политика, «Бархатная» революция, институционально-содержательные преобразования, культурные программы, культурное образование, развитие культуры общества.

В статье рассматриваются содержательно-институциональные трансформации культурной политики РА в послереволюционной Армении (2018–2020 гг.). Основная задача исследования – представить изменения культурой политики после революции, каковы основные аспекты, которые повлияли на появление новой модели культурной политики или хотя бы ее очертания. В статье представлено отражение социокультурного образа политического лидера в сфере управления культурой. В рамках исследования были изучены государственные программы в сфере культуры, новые инициативы, электронные публикации, отражающие проблемы исследования, а также проведены интервью с ответственными лицами сферы культуры.